



Նախագահի գրասենյակ

2020 թվականի մայիսի 19

Բարի լույս LACC ընտանիք,

Դե, ես ձեզ հետ շփման ևս մեկ օր բաց թողեցի: Ես ներողություն եմ խնդրում երեկ ձեզ հետ չշփվելու համար: Օրը սկսվեց խելագար և երբեք չդադարեց: Դասերին ևս երկու շաբաթ է մնացել, մինչև եզրափակիչ քննություններ: Կարող եմ ասել, որ դա կիսամյակի վերջն է, քանի որ գնալով զբաղվածությունն ավելանում է:

Կարևոր հաղորդագրություն՝

Դուք դեռ կարող եք մասնակցել վիրտուալ ճանաչման արարողությանը: Ձեր վերջնաժամկետը վաղն է՝ չորեքշաբթի, մայիսի 20-ին՝ ձեր նկարը վերբեռնելու մասնակցության համար: Մասնակցելու համար անհրաժեշտ տեղեկություններին կարող եք հետևել այս հղմանը՝ <https://www.lacitycollege.edu/Campus-Life/Office-of-Student-Life/document/StudentVideoRecordingInstructions.pdf>

Մինչ դեռ սա անսովոր ավարտական արարողություն է, բայց այն նաև լինելու է բացառիկ արարողություն: Ես երեկ իմ խոսքը ձայնագրեցի, որ կարծում եմ շրջանավարտներին դուր կգա: Մենք ունենք մադթանքներ մեր հայտնի շրջանավարտներից շատերից՝ Մորգան Ֆրիմանից, Սիլոնի Ուիլյամսից, Լորենս Ֆիշբուրնից՝ ներառյալ հատուկ հարգանքի տուրք Մարկ Յամիլից, հիմնական ելույթներ կոնգրեսական Ադամ Շիֆից, քաղաքապետ Էրիկ Գարսետիից, քաղաքի վերահսկիչ Ռոն Գալպերիից, և բարեմադթանքները շարունակում են գալ: Ձեզ համար ուշ չէ 30 րոպե տևողությամբ տեսահոլովակ նկարահանելու համար՝ որպես բարեմադթանք մեր ուսանողներին: Վերջնաժամկետը վաղն է՝ չորեքշաբթի, մայիսի 20-ը՝ ձեր հաղորդագրությունը վերբեռնելու համար: Ահա ձայնագրման հրահանգների հղումը՝ https://lacitycollege.edu/Campus-Life/Office-of-Student-Life/document/Employee_Video_Recording_Instructions.pdf

Սևական ավարտական արարողությունը կլինի վիրտուալ և այն տեղի կունենա այսօր՝ երեքշաբթի, մայիսի 19-ին, ժամը 3:00-ին: Ահա այն դիտելու հղումը՝ <https://sites.google.com/view/laccdaaoibgc/events/black-graduation-celebration/2020-virtual-celebration>

Հիանալի նորություններ՝ Լոս Անջելես համայնքն ունի տեղորոշման նոր կայք՝ հասանելի WiFi գտնելու համար: Ահա այն կայքը՝ www.findwifi.lacounty.gov: Հանրության ցանկացած անդամ կարող է զանգահարել 2-1-1՝ այս կայքից աջակցություն ստանալու համար, կամ կարող է ուղղակիորեն այցելել կայքը: Կայքում տեղադրված է որոնման գործիք՝ հիմնված օգտվողի ֆիզիկական հասցեի վրա, նրանց ուղղորդելու դեպի ինտերնետին վերաբերող տարբեր

Ծառայություններ, ինչպիսիք են ուսանողների համար ինտերնետ հասանելիության ծառայությունները, անվճար WiFi կետերի տեղակայումը ամբողջ Վարչաշրջանում (ներառյալ՝ անվճար թեժ կետերը, որոնք տեղակայված են շրջանի գրադարաններում կամ գրադարաններին հարակից շրջաններում) և կոնտակտային տվյալներ ինչպես բնակելի, այնպես էլ տվյալ հասցեն սպասարկող առևտրի լայնաշերտ ինտերնետ մատակարարների և բջջային ինտերնետ պրովայդերների համար: Եվ ցածր գներով ինտերնետ հասանելի է Human-IT-ից: Ինտերնետային ծառայությունը ամսական 14,99 դոլար է կամ տարեկան 179,88 դոլար: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք կրանց՝ <https://hitconnect.org/sales/buyInternet?product=7454-ny>:

Ամառային դասերի բաց գրանցումը սկսվել է երեկվանից՝ մայիսի 18-ից: Ամռան դասացուցակը հետևյալ կայքում է՝ <https://www.lacitycollege.edu/Academics/Classes/Class-Schedules/Summer>:

Քրոմբուքների կեսը ուսանողներին ուղարկվել էր անցած շաբաթ, իսկ մյուս կեսը պարզապես ժամանել էր LACC երեկ երեկոյան: Վերջապես: Դրանք կառաքվեն այսօր, և ուսանողներին պետք է հասնի մինչև հինգշաբթի օրը: Ես շատ ցավում եմ, որ այսքան ժամանակ է պահանջվել այն ավարտին հասցնելու համար: Մենք այժմ սարքերը հավաքում ենք այն ուսանողների համար, ովքեր դրանց կարիքը կունենան ամառային դասերի ընթացքում:

Վիրտուալ ճանաչումը տեղի կունենա երեքշաբթի՝ հունիսի 9-ին, երեկոյան 5:00-ին: Ահա վիրտուալ ճանաչման արարողության վերաբերյալ բոլոր տեղեկությունները՝ <https://www.lacitycollege.edu/Campus-Life/Office-of-Student-Life/Commencement/Virtual-Recognition>:

Ձեզ համար դեռ ուշ չէ EW (Emergency withdrawal) խնդրելու համար: Հայտը կարող եք գտնել հետևյալ կայքում՝ <http://www.lacitycollege.edu/Admissionions/Admissionions-Records/General-Petition>: Դուք դեռ կարող եք պահանջել Pass/No Pass: Հայցաթերթիկը կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ <http://laccd.edu/Students/Pages/Student-Forms.aspx>:

Եվ, վերջապես, այստեղ ձեզ համար մի զվարճալի բան, որ կարող եք կիսվել ուրիշների հետ՝ «Երկուշաբթի Միշել Օբամայի հետ», պատմության ժամանակ Penguin Random House-ի և PBS KIDS-ի հետ, որոնք հոսում են YouTube-ում և Facebook-ում, երկուշաբթի՝ Արևելյան ժամանակով կեսօրին կամ մեր ժամանակով առավոտյան 9: 00-ին՝ <http://www.pbs.org/about/blogs/news/mondays-with-michelle-obama-story-times-with-penguin-random-house-and-pbs-kids-streaming-on-youtube-and-facebook-start-monday-april-20-12-noon-et/>

Բարի գիշեր Դոլլիի հետ - Երևակայական գրադարան քնելուց առաջ պատմություններ Դոլլի Պառտոնի հետ՝ <https://imaginationlibrary.com/goodnight-with-dolly/>

Շնորհակալ եմ բոլորիդ այս 10 շաբաթվա ընթացքում մեր ուսանողներին և միմյանց ցուցաբերած օգնության համար: Դուք բոլորդ հանդիպել եք մարտահրավերի ամենադժվար հանգամանքներում:

ԱՎԱՏԱՆՎԱՃԻՐ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԻՐ

Շարունակեք պահպանել ձեր հույսի լույսը

Լավ և ապահով եղեք:

Մերի

Խնդրում ենք այցելել [LACC](#) կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար

Please visit the [LACC website](#) to view this message in Armenian, Korean, Russian, or Spanish.

Посетите LACC [website](#), чтобы просмотреть это сообщение на Армянском, Корейском, Русском или Испанском языках.

Para ver este mensaje en español, favor de visitar el sitio web de [LACC](#)